Զ Ե Կ Ո Ւ Յ Ց Ա Գ Ի Ր
2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

25. ՕԳՈՍՏՈՍԻ 2016 ԹՎԱԿԱՆ

Մեծարգո մարզպետ, հարգարժան տիկին Պողոսյան, հարգարժան պարոն Մկրտչյան, հարգելի հյուրեր, գործընկերներ.

Մանկավարժների այսօրվա մեր խորհրդակցությունը նվիրված է ամփոփելու նախորդ ուսումնական տարվա արդյունքները, խոսելու ձեռք բերված հաջողությունների և թերությունների մասին, նախանշելու մեկնարկվող ուսումնական տարվա խնդիրները և անելիքները:

ՀՀ Արարատի մարզում գործում է 112 հանրակրթական դպրոց, այդ թվում՝ 21 հիմնական, 86 միջնակարգ և 5 ավագ դպրոցներ:

Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներում 2015-2016 ուսումնական տարում 31457 աշակերտով կոմպլեկտավորվել է 1588 դասարան: Աշակերտների թիվը անցած ուսումնական տարվա համեմատ ավելացել է 880-ով: Դասարանների միջին խտությունը մարզում կազմել է 19.9 աշակերտ: Մարզի դպրոցներում աշակերտների թվի ավելացումը պայմանավորված է ծնելիությունը աճով :

Մարզի հանրակրթական դպրոցներում աշխատել են 4593 աշխատողներ, որոնցից 2968-ը աշխատել են ուսուցչական, 283-ը մանկավարժական հաստիքներով, իսկ 1342-ը վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողներ են: Ուսուցիչներից 2679-ը ունեն բարձրագույն կրթություն /90 տոկոսը/, 289-ը՝ միջնակարգ մասնագիտական /10տոկոս/ :

Մարզի հանրակրթական դպրոցներում աշխատել են կենսաթոշակային տարիք ունեցող 265 ուսուցիչներ

Մարզի ուսումնական հաստատությունները 2015-2016 ուստարին սկսել են՝ առաջնորդվելով ԿԳ նախարարի հրամանով հաստատված օրինակելի ուսումնական պլանով: Դպրոցների ֆինանսավորումն իրականացվել է ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների կողմից սահմնված աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի համապատասխան գործակիցների կիրառմամբ: Տարիֆիկացիաները հաստատվել են ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկին>> համապատասխան:

Ուսման տարեկան առաջադիմությունը մարզի հանրակրթական դպրոցներում 2015-2016 ուսումնական տարում կազմել է 99.6%, որակը 38.7%: Անցած ուսումնական տարվա համեմատ առաջադիմությունը աճել է 0.4 տոկոսով, իսկ որակը՝ 1.2 տոկոսով:

12-րդ դասարանի շրջանավարտներին բաշխվել է 1649 ատեստատ:

9-րդ դասարանի 2420 երեխաներ ստացել են հիմնական կրթության վկայականներ, որոնցից 90-ը հատուկ նմուշի:

Հանրակրթական դպրոցների 4330 երեխաներ /15.6%/ ցուցաբերել են գերազանց առաջադիմություն և պարգևատրվել գովասանագրերով՝ այդ թվում 1-4-րդ դասարան - 2673, 5-12-րդ դասարան՝ 1657 աշակերտներ:

ԽՆԴԻՐ -Տարրական դպրոցում գերազանցիկները կազմում են աշակերտների թվի 27 տոկոսը իսկ հիմնական և ավագ դպրոցում 9 տոկոսը:

Մարզի ուսումնական հաստատություններում աշխատում են 6 վաստակավոր մանկավարժ, ՀՀ պետական պարգևների, ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ ԿԳ նախարարի և ՀՀ Արարատի մարզպետի շնորհակալագրերի և պատվոգրերի արժանացած շատ ուսուցիչներ:

23 ուսուցչի շնորհվել է որակավորման տարակարգի 1-ին աստիճան:

Ուսուցիչների թափուր տեղերի համար հայտարարված 202 մրցույթներում հաղթող են ճանաչվել 142 հավակնորդներ, որոնցից 124-ը նշանակվել են որպես ուսուցիչ: Արտամրցույթային կարգով 9 ուսուցիչ ընդունվել են աշխատանքի:

ՀՀ պետ. բյուջեի միջոցներով 2016թ. իրականացվում է 3 հանրակրթական դպրոցների և 4 մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ, որի համար նախատեսվել է 266 մլն դրամ: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվում է 640 մլն դրամի /4 մանկապարտեզի կառուցման և վերանորոգման/ աշխատանքներ

Ուսումնական տարվա ընթացքում դպրոցները իրենց միջոցներով ձեռք են բերել շուրջ 43.5 մլն դրամ արժեքով գույք: Դպրոցների բյուջեով կատարվել է 48 մլն դրամի շինվերանորոգման աշխատանքներ:

Այլ կազմակերպությունների կողմից դպրոցներին ցուցաբերվել է 145 մլն դրամի աջակցություն:

Համայնքները ցուցաբերել են 15.2 մլն դրամի աջակցություն:

120-200 ժամ բացակայել են 2-9-րդ դասարանների 53 և 10-12-րդ դասրանների 22 աշակերտներ: 55 աշակերտներ ունեցել են 200 և ավելի ժամ բացակայություններ:

Dasaran կրթական ծրագրում մարզի հանրակրթական դպրոցները գրանցել են 385556 ժամ բացակայություն: Գրանցման անճշտությունը կազմում է 30 տոկոս:

ԽՆԴԻՐ - Ավագ դասարաններ հաճախող աշակերտներից յուրաքանչյուրը բացակայել է միջին հաշվով 27 ժամ, հիմնական դպրոցի յուրաքանչյուր աշակերտ բացակայել է միջին հաշվով 20 ժամ, տարրական դպրոցի յուրաքանչյուր աշակերտ՝ 17ժ: 5-12-րդ դասարաններում աշակերտների բացակայությունների աճը պայմանավորված է թույլ վերահսկողությամբ և ծնողների անտարբերությամբ:

Թույլ է վերահսկողությունը Dasaran կրթական ծրագրում աշխատանքների կազմակերպման նկատմամբ: Ծրագրի կատարման արդյունավետության ցուցանիշը ցածր է Արբաթի, Նորաշենի, Ջրաշենի, Արաքսավանի, Նարեկի, Դարակերտի և մի շարք այլ դպրոցներում:

Դպրոցական սնունդ ծրագրի արդյունավետության բարձրացման նպարակով ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի հունվարից Արարատի մարզում 107

դպրոցների տարրական դասարանների աշակերտների համար ներդրվել է ազգային դպրոցական սնունդ ծրագիրը: Արդյունքում 2014-2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում 43 դպրոցների տարրական դասարանների 4989 աշակերտների տրվել է չոր սնունդ, իսկ 64 դպրոցների 8629 աշակերտների՝ տաք սնունդ: 2015-2016 ուսումնական տարում ևս 16 դպրոցներում տրվել է տաք սնունդ, որի արդյունքում այժմ մարզում տաք սնունդ տվող դպրոցների թիվը դարձել է 83, այսինքն՝ մարզի դպրոցների 77%-ը:

Դպրոցական սնունդ ծրագիրի շրջանակներում մարզի 107 հանրակրթական դպրոցների տարրական դասարանների 14248 երեխաների տրվել է տաք և չոր սնունդ:

Ծրագրի իրականացման համար պետական միջոցների հաշվին մարզին 2016 թվականի համար հատկացվել է շուրջ 326 մլն. դրամ գումար: Սննդամթերքի գնումները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ մարզպետարանի ֆինանսա-տնտեսական վարչության վերահսկողությամբ:

Անցած ուսումնական տարում 1-4-րդ դասարանների երեխաներին 165 օր տրվել է դպրոցական սնունդ, որի համար փաստացի ծախսվել է 263 մլն 728 հազար դրամ գումար:

ԽՆԴԻՐ- Սննդի համար հատկացված գումարների խնայողությունները թույլատրել բացառապես օգտագործել միայն սննդի աշխատանքների կազմակերպման համար:

Ծրագրի շրջանակներում Ռուսաստանի Դաշնության կառավարության ֆինանսավորմամբ մարզի դպրոցներին անվճար տրամադրվել են 610 հատ սառնարաններ, ջրատաքացուցիչներ, էլեկտրական ջեռուցիչներ, խմոր հարող մեքենաներ և էլեկտրական կշեռքներ:

Ծրագրի շրջանակներում մարզի 7 դպրոցների տնօրեններ և խոհարարներ փորձի փոխանակման և վերապատրաստնման դասընթացներին մասնակցելու համար մեկնել են Տամբով քաղաք:

Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջի հիմքով ձևավորվել են կոլեգիալ կառավարման մարմիններ՝ խորհուրդներ; Մարզպետը՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 18.03.2010 թվականի N 113-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության <<Պետական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի պահանջներով, 2016 մարտի 15-ին թիվ 19 որոշմամբ հաստատել է մարզի <<Պետական հանրակրթական ուսումնկան հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների նոր կազմերը :

Խորհուրդներում իր ներկայացուցիչների միջոցով մարզպետը վերահսկողություն է իրականացնում խորհուրդների ընդունած որոշումների և գործունեության օրինականության նկատմամբ:

Մարզի Հովտաշատի, Գեղանիստի, Մրգավանի, Քաղցրաշենի, Լուսաշողի, Բյուրավանի, Վանաշենի, Նոր խարբերդի թիվ 2, Դարակերտի, Այգեզարդի միջնակարգ դպրոցների տնօրենները 65 տարին լրանալու հիմքով ազատվել է

զբաղեցրած պաշտոններից, և մրցույթի արդյունքում դպրոցներում ընտրվել են նոր տնօրեններ:

Կրթության վարչության և դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների կողմից ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների շնորհիվ մրցույթների գործընթացը բոլոր դպրոցներում անցել է սահմանված կարգի համաձայն:

Մարզում վերահսկվում է դպրոցահասակ երեխաների հաշվառումը և նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում:

Համայնքների ղեկավարների և կրթության համակարգի պատասխանատուների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մարզի դպրոցահասակ բոլոր երեխաներն ընդգրկված են հանրակրթությունում:

Կրթության բաժինը համագործակցում է խնամակալության և հոգաբարձության մարմինների, մարզում գործող՝ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, հանրակրթական դպրոցների, բուժհաստատությունների, ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող բաժանմունքների, հասարակական կազմակերպությունների հետ:

Մարզում չկան հատուկ (օժանդակ) ուսումնական հաստատություններ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 80 երեխաների համար Նոր Խարբերդի N 2 միջնակարգ և Արտաշատի N 1 ու Արարատի N2 հիմնական դպրոցներում իրականացվել է ներառական կրթություն: Պարբերաբար իրականացվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառում: Արդյունքում մարզպետարանի հայտի հիման վրա ԿԳ նախարարի հրամանով նոր ուսումնական տարում մարզի ևս 21 դպրոցներում կկազմակերպվի ներառական կրություն:

Մարզում հանրակրթությունից կրթությունից դուրս մնացած աշակերտներ չկան*:*

Պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի շահագործումը և պահպանումը գտնվում է մարզպետարանի վերահսկողության տակ:

Մարզի 112 հանրակրթական դպրոցներից լոկալ ջեռուցման համակարգ ունի 80-ը: Մնացած 31 դպրոցներում ջեռուցումը կազմակերպվում է էլեկտրական սալիկներով, 1 դպրոցում վառելափայտով:

Մարզային ենթակայության 82 դպրոցներին ամրացված անշարժ գույքը հանձնված է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը: Մնացած 25 դպրոցների փաստաթղթերում առկա են անճշտություններ և ընթանում են աշխատանքներ այդ անճշտությունների վերացման համար:

Մարզպետարանի կողմից իրականացվում է վերահսկողություն դպրոցական շենքերի պահպանման նկատմամբ:

Կրթության բաժնի միջոցով իրականացվել է կրթության ոլորտին վերաբերող որոշումների, կարգադրությունների, հրահանգների, տեղեկատվական նյութերի մասին դպրոցներին իրազեկման և բաշխման աշխատանքները: Ժամանակին ստացվել և դպրոցներին տրամադրվել են ՀՀ ԿԳ նախարարության տեղեկագրերը:

Ապահովվել է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը:

ՀՀ կառավարության կողմից 2011թ. նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշմամբ հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստատավորման>> կարգի 10-րդ կետի համաձայն՝ կրթության բաժինը դպրոցների տնօրեններից ստացված ատեստավորման ենթական ուսուցիչների փաստաթղթերի փաթեթները կազմել և սահմանված կարգով ներկայացրել է ատեստավորման մարզային հանձնաժողովին: 2015թ. մարզում ատեստավորվել են 342 ուսուցիչներ:

ՀՀ ԿԳ նախարարությունից սահմանված ժամկետում ստացվել են <<ՀՀ դպրոցականների 2015-2016 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների>> անցկացման մարզային և հանրապետական փուլերի ժամանակացույցերը: Սահմանված ժամկետում և կարգով անցկացվել են օլիմպիադայի տարածքային, մարզային փուլերը, և հանրապետական փուլի մասնակիցների հայտը ներկայացվել է ԿԳ նախարարություն:

7 առարկաներից / մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, ինֆորմատիկա, աստղագիտություն/ օլիմպիադաները անցկացվում են առցանց կարգով: Այդ առարկաներից դպրոցական փուլին մասնակցելու համար հայտավորվել են 4603 աշակերտ: Հանրակրթական մնացած 9 առարկաներից օլիմպիադայի դպրոցական փուլը անցկացվել է 2015թ. դեկտեմբերին ըստ սահմանված ժամանակցույցի: Դպրոցական փուլին մասնակցել է շուրջ 7000 աշակերտ: Դպրոցական փուլի արդյունքների հիման վրա դպրոցները տարածքային փուլ երաշխավորված աշակերտների ցուցակը ներկայացրել են կրթության բաժին: Տարածքային փուլ երաշխավորված աշակերտների թիվը կազմում է 1600: Օլիմպիադայի տարածքային փուլը հայոց լեզվից, գրականությունից, պատմությունից, ռուսաց և օտար լեզուներից, ՀԵՊ և ՆԶՊ առարկաներից սկսվել է 2016թ. փետրվարի 3-ին և անցկացվում է ըստ մարզպետի կողմից հաստատված ժամանակացույցի: Մարզպետի կարգադրությամբ ստեղծվել են առարկայական ստուգող հանձնաժողովներ, որոնք յուրաքանչյուր օլիմպիադայից հետո ստուգման արդյունքները արձանագրությունների տեսքով ներկայացնում են կրթության բաժին: Երաշխավորված 260 աշակերտները մասնակցել են մարզային փուլին:

Մարզային ստուգող հանձնաժողովների կողմից հանրապետական փուլ է երաշխավորվել 85 աշակերտ: Հանրապետական փուլի արդյունքներով 2 աշակերտ պատմություն առարկայից արժանացել է առաջին կարգի դիպլոմի /Արալեզ, Արարատի ավագ/, 2-ը՝ 2-րդ կարգի /Ուրծաձոր, ավշար/, 3-ը՝ 3-րդ կարգի դիպլոմի /Ավշար, Գետազատ, Արարատի ավագ/ 12-ը՝ գովասանագրի:

Մարզի հանրակրթական դպրոցներում զգալիորեն մեծացել է հետաքրքրությունը <<Շախմատ>> առարկայի նկատմամբ:

Մարզային ենթակայության 107 դպրոցների 2-4-րդ դասարաններում դասավանդվում է <<Շախմատ>> առարկան: Բոլոր դպրոցներում դասավանդում են Հայաստանի

<<Շախմատի ակադեմիայի>> կողմից վերապատրաստման դասընթացներ անցած և որակավորման հավաստագիր ստացած ուսուցիչներ:

Ստացվել և դպրոցներին են բաշխվել <Շախմատ> առարկայի դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, աշխատանքային և թեմատիկ տետրեր: Բոլոր դպրոցները ունեն շախմատի դասասենյակներ, որոնք ապահովված են համապատասխան գույքով և դիդակտիկ պարագաներով: Պարբերաբար առարկան դասավանդող ուսուցիչների համար կազմակերպվում են սեմինար պարապմունքներ:

Շախմատի օլիմպիադայի տարածքային փուլին մասնակցած 94 թիմերից մարզային փուլին մասնակցել են 3 թիմեր: Մարզային փուլի արդյունքներով Արտաշատ քաղաքի N 1 հիմնական դպրոցների թիմը մասնակցել է օլիմպիադայի հանրապետական փուլին և գրավել է 8-րդ տեղը:

ԿԳ նախարարությանն է ներկայացվել մարզի հանրակրթական դպրոցների գերազանցության մեդալի նախնական հավակնորդների ցուցակը: Նախնական ցուցակով ներկայացված 5 հավակնորդներից բոլորն էլ հրաժարվել են հավակնորդությունից:

2016 թվականին անցկացված <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն ուսուցիչ>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթի մարզային փուլի արդյունքներով մարզի լավագույն տնօրեն է ճանաչվել Մխչյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Աննա Ավագյանը, լավագույն ուսուցիչ՝ Ավշարի դպրոցի պատմություն առարկայի ուսուցչուհի Մարիամ Խաչատրյանը:

Մարզում գործում են տարբեր գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող միջին մասնագիտական հետևյալ հաստատությունները.

- Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ
- Արարատի պետական քոլեջ
- Մասիսի գյուղատնտեսական քոլեջ
- Արարատ քաղաքի պետական բժշկական քոլեջ:

Մարզի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող պետական քոլեջների 2016 թվականի ընդունելության տեղերը (անվճար և վճարովի ուսուցման հիմունքով) ձևավորելու նպատակով մարզում կատարված անհրաժեշտ ուսումնասիրություն արդյունքում՝ համաձայն ՀՀ ԿԳ նախարարի գրության, ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել Արարատի մարզին անհրաժեշտ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկը:

2015-2016թթ ուսումնական տարվա ընթացքում մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների աշխարհայացքի ձևավորմանն ու զարգացմանը միտված կազմակերպվել են բազմաբնույթ աշխատանքներ՝ մրցույթներ, միջոցառումներ,շարադրություններ:

2015թ սեպտեմբերին անկախության տոնի կապակցությամբ հանրակրթական բոլոր դպրոցներում անցկացվել են միջոցառումներ՝ բաց դասեր, զեկուցումներ, մրցույթներ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում դպրոցներում կազմակերպել են բաց դասեր՝ նվիրված ազգերի ցեղասպանություններին. եղեռն, սեյֆո, հոլոքոստ, մեգալի, ռուանդա, որոնց ընթացքում աշակերտներին ներկայացվել են աշխարհում տեղի ունեցած ցեղասպանությունների մասին տեղեկատվություն:

Կազմակերպվել է <<Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 9-րդ մրցույթ-փառատոն>>-ի դպրոցական և մարզային փուլերը:

ՀՀ ԿԳՆ է ներկայացվել ամփոփ տեղեկատվություն մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում թմրամոլության կանխարգելման նպատակով քարոզչական աշխատանքների, դեռահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների և վնասակար այլ նյութերի շրջանառության կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Մարզի բոլոր դպրոցներում կազմակերպվել են միջոցառումներ 2015 թվականի «Մեր մեծերը» ծրագրում ընգրկված Անդրանիկ Օզանյանի (150-ամյակ), Դանիել Վարուժանի (131-ամյակ), Համաստեղի (120-ամյակ), Փանոս Թերլեմեզյանի (150-ամյակ) և միսիոներներ-արդարների (Քարեն Եփփե, Մարիա Յակոբսեն, Բոդիլ Բյորն, Ալմա Յոհանսոն, Հեդվիգ Բյուլ և ուրիշներ) կյանքին և գործունեությանը նվիրված:

Մարզը ակտիվորեն մասնակցել է ՀՀ կրթության և գիտության և ՀՀ պաշտպանության նախարարությունների կողմից հայտարարած <<Ես գտա իմ հերոսին>> թեմայով շարադրությունների մրցույթին ՝ նվիրված հայրենիքի սահմանների պաշտպանության ժամանակ զոհված, արիությամբ աչքի ընկած զինծառայողներին, 6 լավագույն աշխատանքներ ներկայացվել են ԿԳ նախարարություն:

ՀՀ ԿԳ նախարարության և ՀՀ ոստիկանության համագործակցության շրջանակում անչափահասների քաղաքացիական դաստիարակության, իրավական գիտելիքների իմացության բարձրացման, ինչպես նաև նրանց կողմից կատարվող իրավախախտումները հնարավորինս կանխելու նպատակով դպրոցներում կազմակերպվել են հանդիպում- զրույց՝ <<Դասը վարում է ոստիկանը>> խորագրով:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, ՀՀ-ում ՌԴ դեսպանության, Երևանում Մշակույթի և գիտության Ռուսաստանյան կենտրոնի և այլ կազմակերպությունների աջակցությամբ անցկացվելէ 2015 թվականի ռուսաց լեզվի <<Լավագույն ուսուցիչ>> մրցույթը, որի ներկայացվել է մասնակցելու Արարատ գ.N2 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի ուսուցչուհի Ինեսա Ալբերտի Խաչատրյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Ցեղասպանության 100-ամյակի հիշատակության ծրագրերի շրջանակներում ՀՀ հանրակրթական դպրոցների 5-12-րդ դասարաններում ապրիլ-մայիս ամիսներին կազմակերպվել է ֆոտոմրցույթ՝ «Երաշտ և բողբոջ» խորագրով:Մրցանակների և նվերների են արժանացել Բաղրամյանի ևՎեդու դպրոցները:

Ապահովվել է ֆրանսերեն դասավանդող ուսուցիչների մասնակցությունն ֆրանսերեն դասավանդողների 13-րդ ամենամյա սեմինարին, որը կազմակերպվել էր <<Հայկական Ալիանս Ֆրանսեզ>> կրթամշակութային կազմակերպության Ֆրանսերեն դասավանդողների հայկական ասոցիացիայի հետ համատեղ, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության և

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության աջակցությամբ: ԿԳՆ է ներկայացվել ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում մարզի ֆրանսերեն դասավանդող դպրոցներում կազմակարպված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն:

Ամեն տարի մարզի ուսումնական հաստատություններում անցկացվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ գրողների միության նախաձեռնությամբ սկսված Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ը որպես <<Գիրք նվիրելու օր>> միջոցառումները:

Արդեն երրորդ տարին է մեծ խանդավառությամբ մարզի դպրոցականները մասնակցում են «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական երրորդ փառատոնին: Այս տարի մարզը ունեցավ մեկ դափնեկիր՝ Հովհաննիսյան Քրիստինե Արտաշատ քաղաքի N2 հիմնական դպրոցի աշակերտուհի և մեկ խրախուսական մրցանակի արժանացավ Արտաշատ քաղաքի N2 հիմնական դպրոցի աշակերտուհի Յանա Եփրեմյանը:

2016թ. փետրվարին անցկացվել է ՀՀ կրթության և գիտության և ՀՀ պաշտպանության նախարարությունների կողմից հայտարարված <<Կյանք արժեցող խաղաղություն>> թեմայով շարադրությունների մրցույթ՝ նվիրված հայրենիքի սահմանների պաշտպանության ժամանակ զոհված, արիությամբ աչքի ընկած զինծառայողներին: Մրցույթին մասնակցել են 8-12-րդ դասարանների աշակերտները: 6 լավագույն աշխատանքներ ներկայացվել են ԿԳ նախարարություն:

<<Անտարես>> հրատարակչությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ կազմակերպում է <<Ընթերցման հանրապետական օլիմպիադա-2016>> միջոցառումը:

Մարզի դպրոցականները մասնակցել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Տոկիոյի գրասենյակի աջակցությամբ 7-15 տարեկան երեխաների համար անցկացվող 17-րդ միջազգային բնապահպանական՝ <<Կապույտ Երկիր՝ ո՞ւմ համար>> թեմայով նկարչական մրցույթին:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից անցկացվել է «Իմ ներառական դպրոցը» թեմայով շարադրությունների մրցույթ : Լավագույն 5 աշխատանքները ներկայացվել են նախարարություն:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, ռազմադաշտային պարապմունքներ, ինքնաձիգով և մարտական փամփուշտներով կրակային պատրաստության պարապմունքներ:

Մարզում գործող 112 հանրակրթական դպրոցներից 110 հանրակրթական դպրոցներ ունեն նախնական զինվորական պատրաստության դասասենյակներ, մնացած 2-ը հիմնական դպրոցներ են, որոնք նախկինում չեն ունեցել զինղեկի հաստիք և շենքային պայմանները բավարար չեն ՆԶՊ դասասենյակ ունենալու համար: 107 դպրոցներ և Արարատի տարածաշրջանային քոլեջը ունեն ուսումնական զենք և զինամթերք:

Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների զինսենյակների համար ԿԳ նախարարությունից ստացվել ու բաշխվել են համապատասխան դիդակտիկ նյութեր, պաստառներ, տեսասկավառակներ և այլ ուսումնաօժանդակ գրականություն:

Մարզի հանրակրթական դպրոցների 8-11-րդ դասարանների բոլոր աշակերտները ապահովված են <<Նախնական զինվորական պատրաստություն>> առարկայի դասագրքերով, իսկ ուսուցիչները՝ ուսումնամեթոդական գրականությամբ և ծրագրերով:

Առանձնակի ուշադրություն է դարձվել զինղեկների կողմից դասավանդման գործընթացի ճիշտ կազմակերպման, դասասենյակներում սահմանված կարգով ՀՀ խորհրդանիշների ճիշտ ներկայացման աշխատանքների կատարմանը:

Հետևողական աշխատանքի և համագործակցության արդյունքում մարզի մարզի շատ դպրոցներում նախնական զիվորական պատրաստության դասընթացն արդյունավետ անցկացնելու նպատակով ստեղծվել են ռազմահայրենասիրական և փառքի սրահներ, կահավորել դասասենյակներ, ուր անցկացվում են օդամղիչ հրացաններով հրաձգության դասեր, իսկ մարզի Մխչյանի և Վերին Արտաշատի դպրոցներն ունեն գործող հրաձգարաններ:

Մարզի 45 դպրոցների ՆԶՊ և այլ առարկայական դասասենյակներ անվանակոչվել են համայնքի զոհված ազատամարտիկների, ինչպես նաև հայ նշանավոր գործիչների անուններով:

Մարզի դպրոցների ճնշող մեծամասնությունում գործում են <<Պատանի երկրապահ>> ակումբներ:

2016 թվականի մայիսի 4-ին մարզի հանրակրթական դպրոցների 11-րդ դասարանների աշակերտների համար անց են կացվել ռազմադաշտային պարապմունքներ: Կազմակերպվել են վեցժամյա դասընթացներ, այդ թվում նաև դպրոցներին ամրագրված զորամասերի հրաձգարաններում, կցված զորամասերի աշխատակիցների հետ համատեղ, կազմակերպվել է կրակային պատրաստություն, որի արդյունքում դպրոցների 11-րդ դասարանների աշակերտները մարտական փամփուշտներով կրակել են: Այս հարցում Արարատի մարզպետարանի անմիջական միջնորդությամբ մեծ աջակցություն է ցուցաբերել Արտաշատում տեղակայված ՌԴ սահմանապահ ջոկատի հրամանատարությունը:

Կազմակերպվել և անց են կացվել ՆԶՊ օլիմպիադայի տարածքային և մարզային փուլերը:

Արցախյան քառօրյա պատերազմին մասնակցած, ինչպես նաև այդ ժամանակ զոհված զինվորների պատվին մարզի շատ դպրոցներում կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ:

2016 թվականին անցկացված <<ՀՀ Ազգային ժողովի գավաթի>> մրցումների մարզային փուլին հաղթող ճանաչված թիմերը մասնակցել են հանրապետական փուլին և գրավել 6-րդ տեղը:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում նպատակային աշխատանք է տարվել աշակերտներին և ուսուցիչներին դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ծրագրերով ապահովելու ուղղությամբ:

2015-2016 ուսումնական տարում դպրոցներին են բաշխվել 1-4-րդ դասարանների 51046 դասագիրք, 2019 ուսումնամեթոդական գրականություն, 1611 դասամատյան, ԿԳՆ ԿԱԻ կողմից տրված շուրջ 3200 ուսումնական ամսագրեր ու տեղեկագրեր, ԴՇՀ-ի միջոցով տպագրված 38800 դասագիրք, պետբյուջեի միջոցներով՝ 6468 դասագիրք:

Ծնողների կողմից կատարվել է պլանավորված 88.58 մլն. դրամի ներդրում, որը փոխանցվել է դասագրքերի շրջանառու հիմնադրամի դպրոցների բանկային ենթահաշիվներին: Սոցիալապես անապահով երեխաներին դասագրքերով ապահովելու նպատակով պետության կողմից դրամաշնորհի ձևով մարզի դպրոցներին 2015-2016 ուսումնական տարում տրամադրել է 10214.0 հազար դրամ գումար: 1-12-րդ դասարանների 16255 երեխաներ ստացել են անվճար դասագրքեր, որից 2634-ը 5-12-րդ դասարաններում:

Կրթության բաժնի աջակցությամբ 2015 թվականին մարզի դպրոցները Ճապոնիայի դեսպանատան կողմից ստացել են է 3051, իսկ կրթական ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից՝ 2258 հատ աշակերտական և ուսուցչական գույք: Կրթական ԾԻԳ-ի կողմից մարզի 14 հանրակրթական դպրոցներ ստացել են 308 հատ անձնական համակարգիչներ / նոթբուք/ և 14 հատ պրոյեկտոր:

2015-2016 ուստարում Արարատի մարզում գործել են 5 ավագ դպրոցներ /Արտաշատ, Մասիս, Արարատ, Վեդի, Ոսկետափ/: Ավագ դպրոցներ են հաճախում 1038 աշակերտներ, որոնցից 823-ը սովորել են X-XII դասարաններում:

Հանրակրթության զարգացման ուղղությամբ մարզը համագործակցում է միջազգային, հասարակական, բարեգործական կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ:

<<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> հասարակական կազմակերպության կողմից <<ՀՀ Արարատի մարզի Դիտակի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում 2015-2016 թթ. կատարվել է շուրջ 68.7 մլն. դրամ գումարի ներդրում:

- 2015 թ Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի միջոցներով իրականացվել է Զանգակատուն համայնքի մանկապարտեզի տանիքի վերանորոգում, շենքի արտաքին ջրամեկուսացում, մասնակի վերանորոգում և խաղահրապարակի կառուցում՝ 31.8 մլն դրամ:
- 2015 թվականին <<Ջենիշյան>> հիմնադրամի կողմից վերանորոգվել է Փ.Վեդի համայնքի մանկապարտեզի սննդի պահեստը, խոհանոցի համար գնվել է սառնարան, գազօջախ, ջրատաքացուցիչ և օդափոխիչ:
- 2015թ Կամրջակ սոցալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով իրականացվել է Բաձրաշեն համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգում՝ 15.2 մլն դրամ և Նոր Խալբերդ համայնքի մասնագիտացված մանկատան G3 խմբասենյակների հիմնանորոգում՝ 36 մլն դրամ :

Համայնքների կողմից մարզի դպրոցներում կատարվել է 15.2 մլն դրամի ներդրում:

Մարզի դպրոցներում առկա է 1492 համակարգիչ, 1160 համակարգչային սարքավորումներ, 119 համակարգչային դասարան: Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով:

Ստացվել և դպրոցներին են բաշխվել <<2015-2016 ուստարում մարզի ուսումնական հաստատությունների գործունեության մասին>> վիճակագրական հաշվետվությունները: Նշված հաշվետվությունների լրացված օրինակները հավաքվել են մարզպետարանում, իսկ էլեկտրոնային տարբերակները սահմանված ժամկետում ներկայացվել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն:

Երեխաներին դպրոցին նախապատրաստելու համար կարևոր է նախադպրոցական հաստատությունների դերը:

Մարզում գործում է 98 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ հաճախում է 6548 երեխա, /որից՝ 71 մանկապարտեզ, 5924 երեխա /2015թ. 75 մանկապարտեզներից 4-ը չեն գործել վերանորոգման պատճառով/, իսկ 624 երեխա՝ դպրոցահեն 23 հաստատությունների նախակրթարաններում:

<<Այլընտրանքային ծառայություններ>> ծրագրով շարունակվում է թույլ շեղումներ ունեցող երեխաների հաշվառումը և ընդգրկումը Արտաշատ ք. N 4, N 8 և Այնթապի մանկապարտեզներում:

Վերահսկվում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացման և նախադպրոցական կրթություն ստանալու համար պայմանների ապահովումը:

98 նախադպրոցական ուսումնական հաստատություններից 69-ը, ունենալով ջեռուցման լոկալ համակարգ, աշխատում են շուրջտարյա ռեժիմով, իսկ մնացած 29 հաստատությունների համայնքների ղեկավարներին տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ ապահովելու մանկապարտեզներում շուրջտարյա աշխատանքները՝ իրականացնելով մանկապարտեզի համալիր ծրագրի պահանջների կատարումը:

Սայաթ-Նովա համայնքում հիմնադրվել է նոր մանկապարտեզ, որտեղ հաճախում են 60 երեխաներ:

Համայնքների ղեկավարների կողմից մանկապարտեզներին տրամադրվել է համապատասխան կոշտ և փափուկ գույք, ապահովվել բակային խաղերով և ցանկապատով:

Շարունակվում են նոր մանակպարտեզների կահավորման և վերանորոգման աշխատանքները մարզի Զորակ,Բյուրավան, Բարցրաշեն համայնքներում:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մշտական վերահսկողության տակ է գտնվում ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի օգոստոսի 12-ի N42-Ն հրամանով հաստատված նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջների և սանիտարական կանոնների պահպամնան աշխատանքները:

Մարզում ապահովվում են նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը և նախադպրոցական կրթություն ստանալու պայմանները:

Շարունակվում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների լիցենզավորման գործընթացը:

Անհանգստացնող է դպրոցներում լաբորատորիաների, գրադարանների ժամանակակից վերազինման խնդիրները, դիդակտիկ պարագաների և ընդհանրապես անհրաժեշտ ժամանակակից նյութատեխնիկական ապահովվածությունը:

Նախորդ ուսումնական տարում կրթության վարչությունը համակարգված աշխատանք է տարել ուսումնական հաստատություններում <<Կրթության մասին>>, <<Նախադպրոցական կրթության մասին>> , <<Հանրակրթության մասին>> օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, կրթության և գիտության նախարարության հրահանգների կեսագործման, ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման, մանկավարժական կոլեկտիվներում աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Վարչության կողմից պարբերաբար ուսումնասիրվել են շատ դպրոցներ, արձանագրված թերությունների վերացման համար տեղում ցուցաբերվել է օգնություն և տրվել համապատասխան հանձնարարականներ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

- Մասնագետ կադրերի ընտրություն

1. 18 դպրոցների գրադարաններում աշխատում են ոչ մասնագետներ:
   Արտաշատ քաղաք N3, Արարատ քաղաք N3, Մասիս քաղաքի N1, Ոսկետափի հիմնական և Բերդիկի, Եղեգնավանի, Զանգակատան, Հնաբերդի, Մասիսի, Նոր Խարբերդի N2, Ջրահովիտի, Ռանչպարի, Սիսավանի, Զորակի, Խաչփարի միջնակարգ դպրոցների տնօրեններին տրվել է հանձնարարական նոր ուսումնական տարում կամ ընդունել համապատասխան որակավորում ունեցող գրադարանավարեր կամ ներկա աշխատողներին գործուղել համապատասխան որակավորում ստանալու:
2. 11 դպրոցներում սոց մանկավարժները չունեն համապատասխան որոկավորում:
   Արարատ քաղաքի N3 հիմնական, Ազատավանի, Մրգավետի, Նշավանի, Նոր Խարբերդի N1, Նոր Խարբերդի N2, Ջրահովիտի, Քաղցրաշենի միջնակարգ դպրոցների տնօրեններին տրվել է հանձնարարական ընդունել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ կամ ներկա աշխատողներին գործուղել համապատասխան որակավորում ստանալու:
3. Մի շարք դպրոցներում աշխատանքի են ընդունվել ոչ մասնագետ ուսուցիչներ:
   Արարատ քաղաքի N1 /անգլերեն/, Արտաշատ քաղաքի N3 /անգլերեն/ Մասիսի N6 /լաբորանտ/ հիմնական և Լուսաշողի /անգլերեն/, Մրգավետի /լաբորանտ/, Բերդիկի /կենսաբանություն/, Դալարի /տեխնոլոգիա/, Ջրահովիտի /քիմիա/, Նոյակերտի /քիմիա/ միջնակարգ դպրոցների տնօրեններին հանձնարարական է տրվել ձեռնարկել համապատասխան միջոցառումներ նշված առարկաների դասավանդումը օրենքի պահանջին համապատասխանեցնելու համար փոխարինել ոչ մասնագետներին մասնագիտական կրթություն ստացած մասնագետներով:

- Դպրոցի սահմանային տեղերի խախտումներ

Դպրոցների տնօրեններին հանձնարարվել է հստակեցնել լիցենզիայով իրենց տրված սահմանային տեղերի թվերը և 2016-2017 ուսումնական տարում դպրոցի աշակերտական համակազմը ձևավորել չգերազանցելով սահմանային տեղերի թվերը:

Անշուշտ ուսումնական հաստատություններում թերությունները քիչ կլինեին, եթե մեր կողմից ավելի շատ ուսումնասիրություններ կատարվեին դպրոցներում: Մենք լուրջ անելիքներ ունենք արմատավորելու աշխատանքի նոր ձևեր ու մեթոդներ, անհրաժեշտ վերահսկողության և համագործակցության միջոցով բարեփոխելու մարզի կրթական հաստատությունների գործունեությունը:

Ազգային ժողովի հարգարժան պատգամավոր տիկին Պողոսյան, հարգարժան փոխնախարար պարոն Մկրտչյան, թույլ տվեք արտահայտել նաև մեր մտահոգությունը հետևյալի վերաբերյալ.

- Անհրաժեշտություն է առաջացել վերանայել օրինակելի ուսումնական պլանը, և այն բեռնաթափելու /դասավանդվող առարկաների թվաքանակի կրճատման/ միջոցով աշակերտներին ուշադրությունը կենտրոնացնել հիմնարար առարկաների վրա:
- Առաջարկում ենք դպրոցների ֆինանսավորումը կատարել ոչ թե աշակերտների թվով այլ դասարան կոմպլեկտով:

Նոր ուսումնական տարին լի է լինելու դպրոցներին վերաբերվող կարևորագույն օրենքներով, ծրագրերով, նորմատիվային փաստաթղթերով և դրանց իրականացնելու նպատակաուղղված աշխատանքով:

Թույլ տվեք շնորհավորել Ձեզ և ի դեմս ձեզ՝ մարզի ուսումնական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ և հաստատ համոզմունք հայտնել, որ կրթական բնագավառի աշխատանքները պատվով ու պատասխանատվությամբ կկատարեն իրենց առջև դրված խնդիրները:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ